ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.3. Բնակչության տեղաբաշխման գործոնները

1. Ներկայումս բնակեցված են մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար պիտանի համարյա բոլոր տարածքները: Բայց տարածքի «պիտանիությունը» փոփոխվող հասկացություն է: Երկրագնդի որոշ շրջաններ անցած դարաշրջաններում մարդկանց համար պիտանի չէին, ներկայումս պիտանի են համարվում և յուրացվում են:

Գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ), էներգիայի նոր աղբյուրների հայտնագործումը վերջին տասնամյակներում նպաստել են նոր տարածքների բնակեցմանը և յուրացմանը:

2. Ներկայումս աշխարհի բնակչության ***միջին խտությունը*** է 60 մարդ/քկմ: Տարբերում են շատ բարձր, միջին և ցածր խտություն ունեցող երկրներ:

Շատ բարձր խտություն ունեցող երկրներից են Բանգլադեշը, Բելգիան, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան, Իսրայելը, Լիբանանը:

Միջին խտություն կարելի է համարել այն ցուցանիշը, որը մոտ է համաշխարհային միջինին. Իռլանդիա, Իրաք, Կամբոջա, Թունիս, Մեքսիկա, Էկվադոր:

Ցածր խտություն ունեն Մոնղոլիան, Լիբիան, Մավրիտանիան, Ավստրալիան, Կանադան, Ղազախստանը, Ռուսաստանը: